

891.99

7m-24

19 NOV 2011

891-99

Խ-24

39724

Յ. Խանդավազյան

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒ
ԹԻՒՆՆԵՐ



ԱՌԱՋԻՆ ՊՐԱԿ

174

891-99

Խ-24

06.05.2013

33975

PH
33676

Խաղաղ էր կեանքս մենակ, սգաւոր.
Հոգիս բաղխում էր լուսթեան դռներ.
Սօսու սօսափին ձուլած վերաւոր
Սրտիս ընկերն էր սև կախարդ գիշեր...

Բայց դու մի խելառ, քնքոյշ հայեացքով
Գիշերւայ լապտեր՝ լուսին վառեցիր.
Դու երազային կիզող աչերով
Գիշերիս ճակտին աստղեր ցրեցիր...

Ձրկայ անդորրը սև մենակ կեանքիս.
Ախ, գիշերիս մէջ գիշերդ է վառւում.
Բաղխում եմ ահա վառ երազալից
Դռները սրտիդ... բաղխիւնն եմ լսում...

Գորիս տպարան՝ „Ս Ս Ս Ո Ւ Ն“

1916



Գ Ի Շ Ե Ր Ի Ն

Վարսերդ փոքր իմ հիւանդ կրծքին
Ու նանիկ ասա.
Կորցրած ու մարած լոյսերից անգին
Ինձ հէքիաթ ասա:

Օրօրիւր սիրաս իմ հիւանդ կրծքում.
Գու խաբիր նրան.
Ախ, մռայլ գիշեր, սիրաս մշուշում
Լալիս է անձայն...

Ախ, քուն բեր նրան վառ արշալոյսի
Լոյսի օրօրով,
Գուրգուրիւր նրան մի նոր արևի
Քնքոյշ կարօտով...

Գիշեր, այդ սիրով աչքերս փակիր
Հանգստի քնով
Ծնող լոյսերի յոյսերը երգիր,
Որ նիրհեմ անդորր...

*
*
*

Կրծքումս հանդարտ մի երգ է ծորում.
Կարծես ուզում է հնչել սրտիդ մէջ.
Կարծես քաղցրահոտ խունկ է մեղմ ծխում,
Դէմքդ փայփայում անուշ ամպի մէջ...

Սիրտս մի անուշ բոյր է ծաւալում.
Դիւթիչ է այնտեղ... մայիսեան գիշեր...
Աղբիւրն է հոսում, բլբուլն է խօսում.
Երկշոտ, քաղցրաշունչ բացում են վարդեր..

Նուրբ, դողդոջ սէր է ծլել իմ սրտին.
Փթթում են այնտեղ սիրոյ երազներ.
Կեանքս՝ երգ դարձել, գեփիլու իմ հոգին,
Սիրտս՝ թիթեռնիկ, քո բոցով տարւել...

*
* *

Գարունն եկաւ արուվալայ
Բիւր-բիւր ծաղկանց հոյլերով.
Սիրտս թնդաց ու դուրս ելայ
Անուշ սիւքի թևերով:

Բոյր եմ ծծում, սէր եմ ծծում
Վառ ծաղկերանց շուրթերից,
Սէր եմ շնչում գարնան գրկում,
Ազատ տանջող վշտերից:

Ականակիտ առուն սիրով
Պերճ ափերն է համբուրում
Եւ պատկերս քնքոյշ սիրով
Զինջ հայելում նկարում:

Ես ապրում եմ ծաղկող ծառի,
Ծլող խոտի, վարդի մէջ.
Ես երգում եմ, թրթրում եմ
Անհոգ թռչնի երգի մէջ...

Գարունն եկաւ արուվալայ
Հագած բեհեզ ու վարդեր.
Հէյ, ջան գարուն, թիթեռ դառայ
Եւ պարգեցի նուրբ թևեր...

*
* *

Մի վերջին փայլով տխուր ու դալուկ
Պայծառ ցերեկը մարեց գեղ, լռին.
Հովը քնքշալի մի շնչով լալուկ
Գգում է յուշիկ մայրի անտառին:

Մութը մի անգէմ տխուր գեղութեամբ
Նուրբ քօղը ձգեց դաշտերի վրայ.
Երկինքը՝ յստակ, երազուն, անամպ,
Աստղեր է վառում խոր սրտի վրայ:

Ննջում են յոգնած լեռները կապոյտ.
Օրօր է ասում վտակը արթուն.
Մի քաղցր ոգի իջնում է գաղտուկ
Շշնջում թովիչ երգեր իմ հոգուն:

Թւում է կեանքը հոգեթով երազ.
Ննջում է սիրտս անկարօտ, անվիշտ.
Շքեղ երազում իմ սիրտը՝ երազ
Ննջում է թեթև թովւած ու հանգիստ:

* *

Նստե՛լ եմ ահա այս տխուր գիշեր
Պարտիզում մենակ.
Բուրում են անուշ նարգիզ ու վարդեր,
Յասմինի ու մեխակ:

Մի տխուր վիշտ է իմ սիրտը յուզում.—
Կը մեռնեն վաղ, ուշ
Այսքան գեղեցիկ, այսքան սիրասուն
Ծաղիկունքը քնքոյշ...

Ու մեղմիկ վշտով ջերմաջերմ նրանց
Լուռ համբուրեցի.
Այս տխուր գիշեր նրանց հետ գրկած
Ես անյոյս լացի...

* *

Օտարութեան մէջ, լազուր երազում
Քեզ տեսայ ինձ մօտ իմ բախտ, իմ անգին.
Քեզ հետ զարունն էր իմ սիրտը յուզում—
Սիրտս՝ գերթ ծովը վառ այգի ժամին...

Քնից արթնացայ օտարութեան մէջ.
Երջանիկ ծփաց սիրտս կեանք առած.
Մի քնքոյշ ու ջինջ, մի հետք վառ, անշէջ
Սրտիս վրայ էր ճառագայթացած...

* * *

Նա ժպտում է ինչպէս գարնան պերճ գիշեր,
Ինչպէս լուսնի արծաթ ցոլքը՝ ջինջ ջրում.
Դէմքիս կապում ծիածանի երազներ
Դիւթում սիրտս, մեղմ ինձ իրեն շղթայում:

Օգը շոյում, փայփայում է քաղցրաբոյր.
Նա կանգնել է ինչպէս ցնորք ինձ տանջող.
Աչքերի մէջ խորունկ բոցոտ, սևաթոյր
Սիրտս լողում ինչպէս երկնում աստղաշող:

Ահա քանդեց կոհակ մազերն փրփրաբաշ
Հողիս առաւ իր ծփանքի լայն ծոցում.
Ա՛խ, թող այդպէս սիրտս մեռնի սիրամաշ
Քո ցանկութեան, վառ արևի հուր բոցում...

* * *

Առաջւայ նման գիշերն է երգում.
Սիրոյս յուշերի սոյլերն են հնչում.
— Հոգուս աղբիւրը զւարթ, մեղմապին
Երազ յուշերով մեղմիկ կարկաշում...

Ախ, ես չըգիտեմ քեզ ուր կորցրի.
Դու անցար նազով խորքը գիշերի.
— Հոգուս աղբիւրը տխուր, լալազին
Արցունք է ցօղում կանչում քեզ՝ արի...

Անմեռ գգւանքի համբոյրդ եմ զգում.
Քնքոյշ կարօտով ծաղկունքս հալում.
— Հոգուս աղբիւրը պատկերդ դէմքին
Լալիս է անվերջ չքնաղ անուրջում...



Ձմեռն է իջել նիրհած գաշտերին.
Վայում է քամին ցուրտ ձմերայնի.
— Ո՞վ է իմ սրտում այնպէս սիրագին
Հիւսում վառ գարնան երգը գեղանի:

Թւում է քաղցր այս ցուրտը ձմրան.
Շնչում են գարնան բոյրերը մեղմիկ.
Սիրտս պարուրում թովչանքը գարնան
Հնչում լոյս-այգի համերգը գողարիկ:

Կարօտով մէկը ինձ է երագում
Լազարիթ ծովերի ափերում չքնադ.
Ու սիրտս, սիրտս այս ցուրտ մշուշում
Նրբագործում է գարնան շամանգաղ...



Նոճիները օրօրում են, սօսափում
Սև գիշերի հոգեթրթիւ երագում.
— Ո՞վ էր, եկաւ ծաղկանց զրկեց ու լացեց,
Նոճիներին քնքոյշ սիրով գուրգուրեց:

Նոճիները երագում են մեղմաբար,
Յուշեր զարթնում՝ աստղոտ երկինք մի
պայծառ.

— Ո՞վ էր, իջաւ փարեց ծովին, հեկեկաց,
Նոճիներին հուր կարօտի խօսք ասաց:

Սօսափում են նոճիները կարօտում.
Ծով ու ծաղկունք նըրա մասին հէքիաթում.
— Ո՞վ էր իջաւ նոճիներին մեղմ յուզեց
Ու անհանգիստ հուր կարօտը բորբոքեց...



Ո՞վ է գիրգ շուշան քնքոյշ մատներով
Հիւսում իմ ցայգի ժանեակը տրտում
Ու սրտիս խորքում կենսաբոյր երգով
Ոսկէ ջահերն է սիրալիր վառում...

Ու հեզ ու կախարդ
Իմ խուցն է մտնում, նստում ինձ մօտիկ,
Աստղեր է վառում աչերիս հանդէպ,
Նուրբ կարեկցութեամբ, այնպէս գեղեցիկ
Հսում իմ ցաւը անխօս, ակնդէտ...

Շքեղ ու հանդարտ
Նա դուրս է գնում... մոմս ոսկեհուր
Հուսաւորում է սենեակս մթին.
Ու խաւարի մէջ հերարձակ, տխուր
Գալիս է փարում իմ ծփուն կրծքին.

Սիրում եմ նրան.
Ու նրա համար սիրտս դողդոջուն
Խնկում է, հալում
Աղօթքի նման...



Խոր վշտի նիրհով քնած է անտառ.
Զրկայ ձայն, ծպտուն.
Մեռնում է կամաց, դալուկ վշտահար
Անտառը տրտում:

Եւ ձայնդ չըկայ... սիրած վայրերում
Սուերդ միայն
Դարձեալ ականջիս քո խօսքն է հնչում
Սիրերգի՜ նման...

Թօշնեցաւ դալար... էլ ծաղիկ չըկայ...
Արեւ հանգաւ.

Մնջեցին երգեր անուշ գարունքայ
Կեանքը լուռ մեռաւ...

* * *

Ախ, մէկը ինչպէս երէկն անցւոր
Համը մըմունջով իմ սրտից անցաւ.
Ինչպէս գարունքւայ կեանքը փառաւոր
Անցաւ ու բերաւ աշնան, մահու ցաւ:

Ախ, նա իր սիրով հուր անձրե տեղաց
Մահու խաւարը իմ մէջ նա հիւսեց.
Նրա վառ սիրով սիրտս հեծեծաց,
Նա այդ մահու մէջ քաղցր կեանք վառեց:

Քեզ չեմ անիծում. սիրում եմ ես քեզ.
Ամեն ժամ սիրտս քանդում ես կրկին.
Դու ինձ միշտ օտար, բայց մօտիկ անտե՞ն
Սէր ես մըմնջում ու տանջւում լռիչն...

* * *

Դու ինձ ասիր. — Սյս երեկոյ ես կը գամ.
— Քեզ եմ մնում սօսիների մութի տակ.
Դու ինձ ասիր. — Քո մութ հոգուն լոյս
կըտամ.
— Քեզ եմ մնում սև գիշերում դժնդակ:

Ու ողջ գիշեր շունչս պահած երազում,
Քո սուերի լոյսն է ցոլում իմ սրտին.
Սև գիշերի անապատի աւազում
Ես քնել եմ վառ երազով քո զրկին...



Սրտիս թրթիռը մի ձայն է շոյում.
Հազար երգերով, հազար բոյրերով
Կրծքիս մէջ գունեղ լոյսեր են վառում
Ու կեանքը թովում յոյս-կախարդանքով:

Գարունն է երգում մեղմանոյշ նւագ,
Սրտիս ծաւալում ծաղկունքի հոյլեր.
Ծաղկանց մէջ երգում աղբիւրը յստակ,
Սրտիս մէջ լողում նուրբ երազ-բոյլեր...

Թւում է մէկը ժպտում է հանգիստ,
Սէր է մրմնջում ծաղկունանց միջից,
Իմ սրտին փարած, ձուլւած, ինձ ընդմիշտ
Անուշ լալիս է իր սիրոյ խանդից...

ԲԱՐԻ ԳԻՇԵՐ...

Շուրջս լռութեան ծածկոցն է իջել.
Աղմուկն է մեռել գիշերւայ գրկում.
Աստղերը նազով ճամբայ են ընկել.
Ջրվեժն է միայն տխրածայն երգում...

Ամպերն են խոնւել լեռների գլխին.
Դէպ քեզ է թռչում յուշերիս երամ.
Ունկնդիր սրտիդ սիրոյ երգերին՝
Ես ցնորում եմ այս վայրում օտար...

Կէս գիշեր է լուռ, խաւար, սեամած.
Ճամբայ են գնում լուսեղէն աստղեր.
Ջրվեժն է տխուր հառաչում յուզւած...
— Բնյր իմ հեռաւոր, քեզ բարի գիշեր...

* * *

Արևը մտաւ. ու ծովն է սգում—
Հրաժեշտը գրկած թախծում է ալիք.
Սև նոճինները ծովի եզերքում
Լալիս են անուշ, սոսափում գողտրիկ...

Գիշերը փռեց վերարկուն խաւար.
Թախծում է ծովը... երազում կրկին
Արևը պայծառ... կարծես դողահար
Արևի համար աղօթում լռին...

Խաւար գիշերին ծովն է մեղմ լալիս,
Նոճինները գեղ խշշում են անուշ.
Աննինջ, անհանգիստ ծովը և հոգիս
Անյոյս խաւարում լալիս են քնքոյշ...

* * *

Սրտումս զաղտնի պատկերդ եմ գլուժ
Պայծառ, ոսկեղէն շողերը դէմքիդ.
Բեհեզ հանդերձում ծիրանի, քրքում
Խաղում է դէմքիդ շողշողուն ժպիտ...

Խորունկ գիշերայ մեղմանինջ ժամին
Քո բոց համբոյրը իմ հոգին այրեց.
Հուրհեր վարսերիդ փնջերը անգին
Սրախ թելերին անձկագին հիւսեց...

Այս տխուր գիշեր, այնպէս հոգեզմայլ
Այդ դժու ես յուզում իմ սիրտը նորից.
Ախ, ծագիր, վառւիր շքեղ ոսկեփայլ,
Հրդեհիր լուսով գիշերը կեանքիս...



4095-84



Սիրում եմ այրևող գինին շուրթերիդ,
Խօսքերդ՝ բալ՛գամ, աչերիդ գոհար,
Գեղ ցնցուղները ջրվեժ վարսերիդ
Ու սրտիդ ծովը ծիրանի անծայր...

Գիշերն է ծփում մեղմ ու քաղցրաբույր,
Համբույրն եմ զգում անհաս ափերի...
Ծաղկանց, աստղերին տալիս եմ համբույր—
Ի՞նչ են լոյսերը անանց երկնքի...

Երակներին մէջ երգեր են հոսում.
Սիրով երջանիկ հանգչում եմ կրծքիդ,
Լոյս աստղերի հետ մտերիմ խօսում,
Սիրոյ աղօթքով զրկում եմ հոգիդ...

Աշխարհն է ժպտուն մի եղեմ անգին.
Արբշիւ երգիչն եմ, աստղերի արքայ.—
Քո հրեշտակային ըմպել եմ գինին
Ու անէացել քո շնչում անմահ...



Ջրերն են հոսում զլարթ, կարկաչուն.
Լուսինն է գգւում գիշերը տրաում.
Բամբակ ամպերի աստանդական չուն
Ճամբայ է անցնում լազուր երկնքում:

Տարիներն հոսում պղտոր գետի պէս.
Թռչում երազներն ճերմակ թևերով.
Ու ժամանակը իմաստուն, անտես
Անցնում է հանգիստ լուռ ու անվրդով...

Քայլում եմ ախուր, սրտեղ—չըգիտեմ.
Այս ճանքաները ո՛ւր են վերջանում.
Ես մի անհանգիստ, մոլոր ճամբորդ եմ.
Ի՞նչ եմ որոնում... Էս ո՛ւր եմ գնում...

* *

Ես քեզ տեսայ գարնանային գիշերին,
Երբ որ համր ընկած էի լուռ դաշտում.
Քո աչերը լոյս բուրեցին իմ սրտին,
Անհետացար լոյս ու հէքիաթ գիշերում...

Ես չը գիտեմ ո՞վ ես, գուցէ լուսեղէն
Դու ծնունդն ես տանջւած հոգուս լուսատենչ
Նուրբ երազի պէս ցոլացիր քնքշօրէն
Ու վառեցիր սիրտս այս սև մութի մէջ...

Քեզ սիրում եմ, ինչպէս ծովը՝ երկնքին,
Զերթ ծաղիկը՝ վառ արեին կենսայոյզ,
Ամենուրեք ես գերի՛ եմ քո լոյսին,
Դո՛ւ, լոյս Յնորք, երազային ոսկի Յոյս...

* *

Սրտիս մէջ անտես մի հուր է վառւում.
Ու դէմքս՝ բոսոր, ճակատս՝ տենդոտ.
Աստղերը այնտեղ երգեր են հիւսում
Սիրտս՝ երազուն, աչքերս՝ բոցոտ:

Ու դէմքս՝ բոսոր, ճակատս՝ տենդոտ
Սիրտս թագուցած մի եղեմ ունի.
Ծաղկունքն են այնտեղ բուրում քաղցրահոտ
Երգում խաժահեր ծովը հոլանի...

Սիրտս թագուցած մի եղեմ ունի
Լի աստուածային երգերով շքեղ.
Զքնաղ եղեմը, կեանքը գարունի
Քեզ համար միայն ծաղկում են այնտեղ...

*
*
*

Հոռո, արծաթափայլ ու թուլիչ գիշեր,
Հոռել են, ֆնջել երգ, աղմուկ ու ձայն,
Երկնքում պայծառ այրում են լոյսեր,
Գեղազարդելով փառքը անվախճան...

Երկնքից անտես բերաւոր լարեր
Ձգւում են երկրի անորոշ խորքում
Ու գգւող օգում դողդոջ ու երեր
Նուրբ հնչիւններ են թուլչալի լողում...

Այս վեհ գիշերում մեզմ ու քնքշալի
Ջերմ աղօթում է հոգիս սիրալիր...
Նա փառքն է երգում այս վեհ տաճարի,
Յաւիտենութեան խօսքին ունկնդիր...

*
*
*

Ապրում ենք կեանքում առանձին, մենակ,
Կարծես օտար ենք մենք իրար հոգու,
Ամենքն զգում են իրենց մեն-մենակ
Իրար մօտ, երբեմն ընդդէմ իրարու:

Այդպէս ծաղիկներ ու կանաչ խոտեր
Իրար մօտ բուսած, ապրում են ջոկ-ջոկ,
Այդպէս երկնքում անհամար աստղեր
Իրար մօտ վառւած, շրջում են ջոկ-ջոկ:

* * *

Ես Քեզ չեմ տեսել, բայց գիտեմ որ կաս.
Ինչպէս սուրբ աղօթք ապրում ես իմ մէջ.
Լսում եմ քնքոյշ ձայնդ հանապազ,
Ձգտում է սիրտս դէպի Քեզ յաւերժ:

Դու հեռու ինձնից, լոյս-լուրթ մշուշում
Ապրում, նայում ես իմ տանջած դէմքին.
Սև խաւարներից դէպ Քեզ եմ պարզում
Յոգնած ձեռքերս լմու, աղերսագին:

Լսիր ինձ, գթա... վառիր Քո լոյսից,
Գեղ արևներից իմ մթնած հոգում.
Ա՛խ, մեռայ այսպէս վամպիր խաւարից
Յոյսը աչերիս... աղօթքն իմ սրտում...

* * *

Անդորր ծովի մէջ, մենաւոր կղզում,
Քո փառքի ալիքն իմ սիրտն է յուզում.
Ունկնդիր նրանց վսեմ մրմունջին՝
Ես երազում եմ քեզ հետ անմեկին...

Հեռու ափերում քո այգն է փուել,
Հրեղէն խաղով խաղում են լոյսեր.
Ու հոգիս՝ մանկիկ՝ քեզանով տարած
Ապրում է, պլլած լոյսերիդ անանց...

Անդորր ծովի մէջ, մենաւոր կղզում,
Լուռ նոճիների մրմունջ հովերում
Յրում եմ, հիւսում լոյսերդ գունեղ
Ու վառում փառքիդ ջահը փառահեղ...

* * *

Դու չիմանալով սիրտս խոցեցիր,
Բայց անհոգ քեզնից լուռ բաժանեցի
Ու սև գիշերւայ թևի տակ անծիր
Դառն ու յուսահատ ես տխուր լացի:

Այսօր քեզ տեսայ դալուկ ու վշտոտ.
Դէմքիս մեղմ փթթեց սիրոյ նուրբ ժպիտ.
Դու վհատ, քնքոյշ նստել ես ինձ մօտ,
Արցունք է փայլում բերեղ աչերիդ:

Եւ հեռու այժմ մարդկանցից, կեանքից,
Մեր հոգիներն են խօսում սիրահար. —
Յիշում ենք վշտի տխուր գիշերից
Ու քնքոյշ սիրով գուրգուրում իրար...

ԱՄԱՐԱՅԻՆ ԳԻՇԵՐ

Անգորր է շուրջս, անուրջ, մթնշաղ.
Աշխարհը որպէս գեղեցիկ երազ
Փռել է անափ իմ շուրջը խաղաղ.
Ու հիանում է սիրտս հեզանազ...

Հոգիս գերթ երկինք կապոյտ, աստղալից
Լուին, անորոշ երկիրն է գլուխ.
Զրկայ ինձ համար կարօտ ու թախիծ.
Աստղերս են ժպտում ջինջ հոգուս խորքում..

*

Այսպիսի գիշեր Բանաստեղծն Աստուծ
Տիեզերքով է շքեղ հիանում.
Դոհովթեան ժպիտ դէմքին մեղմ փթթած՝
Նա երազում է հանգստում նիրհուն...

* * *

Նիրհում են մեղմօրօր ծաղկունքը դեռատի,
Նրանց մեղմ գգւում է զեփիւռը սիրահար,
Վառւում են երազներ փայլփլուն, արծաթի
Գարունի վառ լուսնի շողերով անհամար...

Գիշերը սևաւարս յաւիտեան սգաւոր
Լալիս է ծաղկունանց կեանքերը մեղմազին
Ու դնում ցօղիկի կաթիլներ բիւրաւոր
Նրանց լուռ ու անհոգ թաւիշէ թերթերին...

* * *

Դու այնպէս երազուն իջել ես հոգեթով
Ու փարել իմ հիւանդ հէգ սրտին՝ քրոջ պէս.
Սրտիս մէջ սիրալիր վառում ես երգերով
Հեռաւոր եղերքի արեւներ օսկեգէս...

Ու սիրտս քնքշալի աչերով երազուն
Նայում է հմայւած այն հեռու ավերին.
Մեղմանուշ նուրբ սիրով ժպտում է ու
փարում
Քո ասած երգերին, քո զիւթող երեսին...



Մանիշակաբոյր հոգիս ցնորուն
 Լսում է ձայնը քո հոգու երգի.
 Խնկում է սիրտս երգով ոլորուն,
 Բարձրանում բոյրը սիրոյ աղօթքի:

Անյայտ բարձունքից համբոյր ես նետել
 Մենաւոր սրտիս սգաւոր խորքում.
 Մանիշակաբոյր իմ սիրտն է բացւել—
 Քեզ համար քնքոյշ իր բոյրը խնկում:

Քեզ չեմ ճանաչում. սիրում ես դու ինձ.
 Համբոյրդ եմ զգում անտես, գեղանի.
 Ա՛խ, ես մեռնում եմ քո սուրբ համբոյրից,
 Օրհնելով սէրդ տանջող ու գազանի:



Եկել է ահա անյայտ դիցունհիս,
 Արբշիտ բուրում են քնքոյշ ծաղիկներ,
 Դիւթանքի երգով գուրգուրում հոգիս,
 Ծիածանում են հոգուս երազներ...

Կանչում, թովում է Արեւի ուղին.
 Հեռաւոր երկրի օրհներգն եմ լսում.
 Գուրգուրում է ինձ իմ լոյս դիցունհին,
 Բիւրեղ երգերի աղբիւրն է հոսում...

Ա՛հ, լազաւթ երկրի լուսագեղ ամեր,
 Ոսկի օրերի մշտատե գարուն,
 Ուր ոգիների սիրասուն վարդեր
 Ապրում, բուրում են խնդակցում սիրուն:

Նւագն է հնչում շողշողուն լոյսի,
 Ծնւում է նորից՝ մանուկ՝ իմ հոգին.
 Խմում եմ լոյսը էն Արեւ կոյսի,
 Վաւում, ցնծում է յոյսերի այգին...

Հեռաւոր երկրի լալազար ամեր,
 Անհանգիստ հոգուս անգին հայրենիք,
 Իմ ծիրանավառ երազ ու տենչեր
 Դէպի ձեր գիրկն են թռչում գեղեցիկ...

* * *

Շուրջս աշխարհն է երգում թովչալի-
Լայն ու խոր՝ խօսում ծովը արծաթեայ.
Անտառն է երգում՝ մեղմ ու քնքշալի
Հէքիաթներն կեանքի երազ գիշերւայ:

Լուսնի շողերը հեզիկ, դողդոջուն
Խաղում են խորունկ ծովակի գէմքին.
Ու խորհուրդները գլարթ, կարկաչուն
Լուսեղէն երգ են հնչում իմ սրտին:

Ազամանդեղէն աստղերը որպէս
Սրտիս ծաղկունանց մտերիմ բոյրեր,
Իջել են սրտիս դիւթական պարտէզ...
Ու սիրտ-երկնքիս հոսում են բոյրեր...

Հոգիս աշխարհի հէքիաթն է ըմպում.
Հիացքով սիրտս գերթ պերճ ծիածան
Աշխարհի հոգում զօտի է կապում...
Որպէս նուրբ հէքիաթ սերտ ու անբաժան...

* * *

Հագել ես բեհեզ հագուստդ շքեղ,
Հոգիդ շղարշել այգի շողերով,
Վառ, լուսապայծառ աչերդ անմեղ
Գեղազարդում են գէմքիդ նուրբ գորով:

Նստել ես ինձ մօտ թեթեւ ու սիրուն.
Հոսում են սրտիդ երգերը անուշ.
Դժ, լուսէ երազ, իմ սև գիշերում
Նուրբ երանգում ես պատկերը հոգուս:

Խօսում ես անվերջ, պատմում ես անվերջ,
Թեք է առնում օրօրուդ հոգիս
Ու լողում անհուն լուսէ ծովի մէջ...
Քնքոյշ աչերդ ժպտում են նորից.—

Ժպտում են հեռից հեռու անսահման.
Բայց թւում՝ մօտ ես, իմ սրտին փարած.
Դժ, երազ հոգուս երանգ հանգրւան,
Իմ չքնաղ ցնորք յաւիտեան անհաս...



Հնչում է անուշ աստղէ յոյսերիս

Սրինգը շքեղ

Ու թիթեռները շուրջս խնդալից

Պարում են անմեղ:

Գարունն է թովել ինձ զմրուխտ հովտում

Այս հէքիաթ գիշեր,

Վարդեր ու բլբուլ մեղմանուշ խնդում,

Ժպտում են լոյսեր:

Պօսում է կապոյտ կոյսը թովչալի

Մօտիկ, սիրահալ

Փարում է սրտիս քնքոյշ, գեղանի

Զքանում դարձեալ:

Հնչում է անուշ քաղցր երգերիս

Սրինգը շքեղ

Ու ծափ են զարնում ոսկէ յոյսերիս

Թևերը գունեղ...



Քեզ եմ որոնում քնքոյշ կարօտով.

Հոգիս զգւում է դէմքդ բուրաւէտ.

Պաղաղ երեկոն իր տրտում մութով

Քո մասին անա խօսում է ինձ հետ:

Աստղերն են նայում երկնի լազուրից—

Աչերդ են պատմում սրտիդ վառ տենչանք.

Գրկում է սիրտս մի սիրտ կարեկից

Ու այնտեղ վառում անուշ անըջանք:

Գիշերւայ քօղը իմ շուրջը ծածկեց—

Վարսերդ փռան իմ մեջած սրտին.

Բոսոր լուսինը ծովակից ծագեց—

Գզւում է հոգիս յոյգերդ անգին...

Գետակն է հոսում դէպ գերկը ծովի—

Քո սէրը մրմունջ իմ սիրան է հոսում.

Լսիր հէքիաթը ծաղկանց հետ հովի,—

Իմ սիրան է սրտիդ հէքիաթ մրմնջում...

Անուրջ տւեցիր, անցար, գնացիր.

Կակիծ կարօտով քեզ եմ որոնում.

Յնորք իմ չըկնա... յուշերով անծիր

Իմ ախուր սիրան ես քնքոյշ աւերում...



Թախծի պարտիզում,
Սև նոճիների սոււերների տակ
Նստել եմ տխուր, հիւանդ ու մենակ.

Ա՛խ, ո՞վ է յուզում
Վարդի թփերը անուշ ու մեղմիկ
Եւ սէրը երգում տխրալի, յուշիկ.

Ես լուռ, սգաւոր
Լսում եմ երգը մեղմ, գորովալի
Այս լուռ գիշերւայ վառ արևների.

Նա գեղ, վիրաւոր—
Իմ ցնորքների քոյրը սիրասուն
Նստել է ինձ մօտ հոգեզմայլ սիրուն.

Ու հեզ ջերմագին
Փարում է սրտիս նուրբ սիրանէր,
Հոգուս մէջ ցրում աստղերի բոյլեր.

Իմ սիրող հոգին
Երգում է յուշիկ, անուշ, մեղմաձայն
Թախծին ու կեանքին երգը օրհնութեան...

ԱՐՄԱՒԵՆԻՆ

Լուռ անապատի անծայր աւազում,
Որտեղ քամին է իշխում լիազօր,
Մի արմաւենի աճել էր հզօր.
Անապատում էր անդորր երազում:

Գլուխը երկինք ուղղած վեհափառ,
Փռել էր շուրջը ճիւղերը փարթամ.
Եւ ճամբորդ քամին է աստանդական
Խօսում նրա հետ ջերմ ու սիրահար...

Կարաւանները այց էին գալիս,
Խմում աղբիւրի ջրիցը անուշ,
Ու զանգակների ձայները քնքոյշ
Դարձեալ հրաժեշտ էին լուռ տալիս:

Արևը ոսկի վարսերն էր փռում
Դէպ նրա բունը՝ սաղարթի միջով,
Ու արմաւենին հեզիկ շրշիւնով
Կիզող արևի համբոյրն էր առնում:

Նրա մէջ անխոնջ գիշերը կախարդ
Ջայներն է հիւսում մի անյայտ երգի.
Ոսկի աստղերը չքնաղ հարաւի
Այն երազներն են գուրգուրում հանդարտ...

Լուռ անապատի անծայր աւազում
Մենակ, վիթխարի պարթև հասակով
Գեղ արմաւենին աննինջ սօսափով
Աստղերի հետ է հանգիստ երազում...

* * *

Այս սիրուն գիշեր երգերով անծայն
երազն են հիւսում վարդեր ու նարգիս.
Ջեփիւռը գողտրիկ, գերթ շունչը մանկան,
Համբոյր է տալի թերթերին թաւիշ:

Շքեղ, ցնծագին աստղերը գոհար
Մի լոյս հէքիաթ են չքնաղ մրմնջում.
Ծովափում հեզիկ, քնքոյշ, միալար
Ալեակն իր երգն է մեղմաձայն հնչում...

Երկիրն է բուրում...մայիս է անգին...
Ջեռուն հիւսում է կեանքը տենչալի...
Ա՛խ, գլուխդ դիր իմ բոյրոտ կրծքին,
Լսիր սիրահար լացը բլրուլի...

* *

Գիշերը իջաւ մեղմ ու տխրալից.

Աշուն է. մշուշ.

Անձրեւ է մաղում երկինքը վերից,
Հեկեկում անուշ...

Գիշերն դարերի վշտով ծանրալից

Փարեց ինձ, գրկեց.—

Սև կաթ է տալիս իրա ստինքից

Ա՛հ, սիրտս հարբեց...

Գիշերն է սգում... վիշտ է անձրևում

Տխրամած սրտիս.

Վշտով ծանրացած, անծայր մշուշում

Արթնն է հոգիս...

* *

Լալիս է ամպը ծովի երեսին.

Գարունն է մեռել անտրտունջ, լռին.

Անտառը սգւոր, ձեռքերը կմաղք.

Տխուր վերուզղած նայում է երկնին:

Շուրջս վարդերի բոյրերն են սգում.

Ու մէկը թովիչ տխուր վշտերգում.

Վշտի վարդերում լալիս է սիրտս.

Մի մեղմ թախիծ է հոգիս ընդգրկում.

Ա՛խ, ո՞վ է այնպէս կանչում ինձ, լալիս,
Կորցրած, մոռացած հեռու ափերից.

Ո՛չ. մնաս բարով... ես այն չեմ, այն չեմ.

Բոյրերն են սգում. մի՛ կանչիր դու ինձ...

* * *

Հեծում է, մեղմաձայն հառաչում
Այս աշնան գիշերին նուրբ քամին,
Անձրևը քնքշօրէն հեկեկում,
Քո երգը հեծեծում լալազին...

Քո երգը հեծեծանք ու կարօտ,
Քո խօսքը, լուռ խօսքը սուգ ու սէր,
Աչերըդ վշտահալ, խոր թախծոտ,
Թափում են մեղմահոս արցունքներ...

Հեծում է, մեղմաձայն հառաչում
Այս աշնան գիշերին նուրբ քամին,
Անձրևը քնքշօրէն հեկեկում,
Քո երգը հեծեծում լալազին...

* * *

Ըմպած թախիծի ակը մեղմախօս,
Լուռ անապատում հանգչում եմ մենակ,
Աստղերի երգը շքեղ, քաղցրահոս,
Հիւսում է սրտիս վշտերի պսակ...

Շուրջս սօսափում անորոշ թևեր,
Գլում են յոգնած սիրտս մենաւոր,
Արբեցած, ըմպած աստղէ արցունքներ,
Լուռ անապատում ընկած եմ սգօր...

Ու տիեզերքի խորութիւններում
Լուռ ու սգաւոր տարւում եմ հիմա,
Վշտով արբեցած, աստղէ լոյսերում
Հանգչում եմ Աստծոյ ձեռքերի վրայ...

ԱՍՏՂԵՐԻ ՀԱՄԱՐ...

(Վ. Փ.-ին)

Բոյրեր ու ծաղիկ... գիշեր լուսընկայ
երգում է հովտում արծաթէ առուն.
Մայրի անտառը շքեղ, գաղտնապահ՝
Գարնան հէքիաթն է սօսափում սիրուն:

Ժայռի կատարին ջութակն է այնպէս
Սիրալիւր երգում այս անուշ գիշեր...
Աստղեր ու լուսին ունկնդիր կարծես
Ձինջ ծովի խորքում վառում են լոյսեր...

Քաղցրաբոյր հովը, երգասաց առուն,
Անտառը՝ երգով նուրբ կախարդային,
Ազամանդափայլ ծովը թրթռուն՝
Գեղ ձայնակցում են նրա երգերին...

Ժայռի բարձունքին, ջութակը կրծքին,
Աչքերը յառած լուսեղէն հեռուն,
Երգիչն է յուզած այնպէս սիրագին
Աստղերի համար քնքոյշ նւագում...

Շրջում եմ ահա պարտիզում այս հին,
Տեսնում եմ թօշնած ծաղկունքը նորից,
Լսում միալար գետի մեղեդին...
Գլուխ է սիրտս մի մաշող թախիծ:

Նստել եմ տխուր մի քարի վրայ.
Ո՞վ գիտէ, այստեղ քանիսն են նստել,
Քանիսն են թախծել այս քարի վրայ,
Այս հին պարտիզում թախծել ու շրջել...

Եւ ռւր են նրանք. ռւր հետքը նրանց.
Ջրկան. չեմ տեսնում. չեն եղել կարծես.
Ինչպէս գալիս են ու անցնում վաղանց
Սոսկ մի օր ապրող ծաղիկների պէս:

Շրջում եմ ահա այս հին պարտիզում,
Լսում միալար գետի մեղեդին...
Անյայտը ինձ էլ կառնի իր գրկում՝
Պարտէզը դարձեալ պարտէզն է այն հին:

ՎԱՂԱՄԵՌ ԸՆԿԵՐՈՋՍ

Լուռ մարեց կանթեղը քո հոգու գեղանի—
Այլ կեանքում, այլ երկրում գընացիր

ապրելու.

Այնտեղի խաւարում չեն վառուում գարունի
Ծաղիկներ, երազներ, ոսկեղէն լոյս հեռու...

Դու, հոգով ծիրանի արշալոյս գեղեցիկ,
Մարեցիր քնքշութեամբ մահաւան սև

վիհերում.

Արևին սիրահար դու թօշնած վառ ծաղիկ,
Դու, ցնդած նուրբ երազ՝ այդ տխուր

խաւարում:

Ընկեր իմ, մտերիմ, խաւարը քո կեանքի
Ներկել է սևերով իմ հոգին տխրութեամբ.—
Հագել է իմ սիրտը զարդերը սև սգի

Ու ցօղում արցունքներ. որպէս սև, խաւար
ամպ...



Կայ մի սրբազան մի լուսէ Բարձունք,
Որտեղ աստղերը երազն են մեկնում,
Որտեղ Արևը ընտրել է գահոյք...
Քամիներն այնտեղ հանգիստ են առնում:

Ու այդ Բարձունքի մարմար ամրոցում
Իշխում է մի Կոյս հրաժամ ու մերկ,
Նրա տիեզերք երկինք աչքերում
Աստուածը անխօս հնչում է իր երգ:

Շուրջը պարտէզն է ոսկեվառ ծփում,
Կայլաղում մեղմիւ աղբիւրը բիւրեղ,
Մուրը, անմահական երգերն են հոսում
Զինջ լոյսերի հետ խաղալով շքեղ:

Ու յաւերժ դալար պարտիզի ծաղկունք
Մունջ բուրվառում են աղօթքի բոյրեր.
Շրջում է Կոյսը—ողջ սէր ու բուրմունք—
Ու մեղմիկ երգում լուսեղէն երգեր...

Ունկնդիր նրա հրաշափառ ձայնին,
Այս մութ վհերում երազում եմ ես,
Անխոնջ դէպի վեր քայլում եմ կրկին,
Կանչում է Կոյսը, կանչում ինձ անտես...

Մութն է ծանրացել ուսերիս փոշոտ,
Հազար փշերից մարմինս խոցւած,
Հազար երազով ճակատս տենդոտ՝
Քայլում եմ դէպի Բարձունքը վառւած...

* * *

Սիրտս կիթառն է. լարերը քնքոյշ
Աստղերի ոսկէ թելերից հիւսած.
Պահում են նրանք սիրոյ քաղցրանուշ
Երգերը՝ կարծես այլ երկրում ծնւած...

Անյայտ, դիւթական քնքշաշարժ մի ձեռք
Հարերի հետ է խաղում խանդակից,
Անձկալի հնչում մի անուշ սիրերդ,
Անափ երազում խնդակցում հոգիս...

Սիրտս կիթառն է անուշ, քաղցրաձայն
Երազ երգերում շքեղ համերգում.
— Ո՞վ է իր կրծքին առած անբաժան
Ինձ գուրգուրում միշտ քաղցր տանջանքում:

* *

Արցունքն աչքերին,
Սգաւոր, տրտում
Իմ տան ապակին
Աշունն է բաղխում...

Հուռ ու սգաւոր,
Արցունքն այսերին
Մէկը վիրաւոր՝
Զարկում իմ սրտին...

Աչքերը ինչպէս
Գիշերը տրտում,
Սրտիս մէջ անտես
Վիշտ է համերգում...

Դու, գեղ վիշտ անհուն
Մի անգին սրտի,
Հանգչիր իմ սրտում
Կարօտ հանգստի...

ԲԱՆԱՍՏԵՂԾԸ

(Յովհ. Թ.-ին)

Շքեղազաւար անտառի եզրին նա անսխիթ
ընկած
Ունկնդրում է դարձաւարկաչ զանգակ
աղբիւրին.

Աղբիւրը մեղմիւ գնգում է անուշ ու
խօսում յուզւած
Իր բարեկամի, իր ջերմ ընկերի սիրաշունչ
սրտին...

Քամին թրթռուն խաղում է թեթեւ գլեւիով
հրան,

Անտառը շքեղ սօսափում, կարծես նրա հետ
զրկում...

Ու թռչունները սիրոյ համերգով զւարթ,
բաղցրաձայն

Նրա լսելիքն ախորժ ու թովիչ քնքոյշ
փայփայում...

Աղամանդակուռ բիւրեղ Բարձունքից հովը
 խնդազին
 Համբոյր է բերում, շքեղ Արևի լոյսերից
 հիւսւած...
 Խօսում են շուրջը ծաղկունք ու քարեր,
 ծառեր ու գետին,
 Լսում է ուշիմ, հոգու թևերով բոլորին
 գրկած...
 Մեղմ հէքիաթախօս անտառի եզրին նա
 անփոյթ ընկած,
 Խնդում են շուրջը թռչուն ու հովեր,
 ծաղկունք ու թիւեր.—
 Կարծես բոլորի ընկերն է, տէրն է, այցի է
 եկած.—
 Հնչում են շուրջը ուրախ, տօնական ձայներ
 ու երգեր...
 Եւ նրա համար աշխարհը մի վառ երազ է
 ու երգ:



Անհունածաւալ, անեզր ծովում,
 Պայծառ արևի շքեղ լոյսի տակ,
 Երազ կղզին է շքեղ բարձրանում
 Դէպի անհունի երկինքը յատակ:

Որպէս աղբիւրի հոսանքը անուշ,
 Գեղ փերինները նուրբ շարան-շարան
 Կղզու տաճարից ելնում են քնքոյշ
 Լոյս հէքիաթներով պայծառ, գիւթական:

Սոճու, արմաւի սօսափը գողտրիկ
 Փայում է նրանց վառ սէրը երազ.
 Ծառուղիներում մեղմ ու գեղեցիկ
 Փռւում է նրանց սէրը հեզանազ...

Անհունածաւալ, անեզր ծովում,
 Պայծառ արևի շքեղ լոյսի տակ,
 Երազ կղզին է շքեղ բարձրանում
 Դէպի անհունի երկինքը յատակ...

* * *

Երբ ես դժգոհ կեանքից, տխուր աշխարհից,
Սգի քօղ է սիրտս առնում իր դէմքին,
Դու գալիս ես, հիւսւած լոյսից ու բոյրից,
Ինձ հետ լալիս գուրգուրում ես իմ հոգին:

Երագներ թոյրը քնքոյշ, գիւթական,
Հոգուս համար դու նոր արե ես բերում,
Հոգուս սիրած երգը երգում մեղմաձայն,
Գոհար արցունք քո սիրասուն աչերում:

Եւ երբ տխուր քուն եմ մտնում ես դադրած,
Բարձիս մօտիկ, պայծառ, լուսեղ անըջում
Աչերդ յառած դէպի վերե երկիւղած
Դու ինձ համար լոյս աղօթք ես մըմնջում:

ՄԱՀԻԱՆ ԿՂԶԻՆ

(Բեօքլինի նկարի առաջ)

Հեռաւոր, անյայտ խաղաղ ծովի մէջ
Սեին է տալի մահւան լուռ կղզին.
Կանգնած է այնտեղ նա դարեր անվերջ—
Անդէտ մեր կեանքին, մտքին, երազին:

Այդ խաղաղ ծովի մութ կրճքի վրայ
Երբէք չի ճչում ճայր անհանգիստ.
Ահեղ, դառնաշունչ ժայռերը նրա
Թռչուն ու հովեր չըզիտեն ընդմիջտ:

Սև նոճիները տխուր, անսօսափ
Մի ցուրտ աշխարհի գաղտնիքն են պահում.
Այնտեղ մի կեանք է ապրում լուռ, անյայտ,
Որ մեր աչքերը բնաւ չեն տեսնում...

Ասում են այնտեղ լուռ, աներևոյթ
Մարդկանց հոգիքն են շրջում շարունակ
Ու կոյր, անզգայ, անտարբեր, անհոգ,
Թափառում են միշտ անխօս, միայնակ...

* * *

Միասին էինք մի հեռու երկրում,
 Մի անդարձ երկրում.
 Այնտեղ ամեն ինչ անանց, քաղցրաշունչ
 Մի բոյր էր խնկում...

Նախկին օրերի սօնաձայն է հիմա
 Իմ հիւանդ հոգում
 Այնպէս սիրաշունչ, այնպէս քաղցրատանջ
 Անուշ հեկեկում...

Շուրջս երազը ժանեակ է հիւսում,—
 Ժանեակը իր ջինջ.
 Նւագն է հնչում, և երազանում
 Ես ու ամեն ինչ...

* * *

Տերևները տխուր, դժգոյն, դալկահար
 Օրօրւում են ծառերին.
 Պարտէզը լուռ, ամայացած, դողահար
 Նուրբ ժպտում է արեւին.

— Բարի արեւ, շողա, շողա՛ դու դարձեալ:
 Քո ջերմ, անուշ, քաղցր շողքիդ լոյսի տակ
 Վառ համբոյրդ աննելով,
 Մահանում են նրանք անվիշտ ու զւարթ
 Լոյսդ, լոյսդ գրկելով.

— Շողա, շողա, աշնան քաղցրիկ արեգակ:
 Ձէ՛ որ մի օր քո վառ կանչը լուսեղէն
 Նրանց կեանքի հրաւիրեց.

Այսօր նրանք լուռ ընկնում են դալկադէմ
 Քո ցուրտ, քաղցրիկ համբոյրը.
 — Բարի արեւ, զգւիր, զգւիր մեղմօրէն...



Անուշ բոյր էր, շամանդաղ էր քնքուշիկ
Քո պատկերը, քո պատկերը սիրասուն.
Անուշ սէրդ ծիածան էր գեղեցիկ,
Որ զարդում էր, որ ժպտում էր իմ հոգուն:

Դու անցել ես, դու անցել ես գեղեցիկ,
Որպէս բոյրը չնաշխարհիկ ալ-վարդի.
Դու անցել ես, դու անցել ես հանդարտիկ,
Զերթ հեծեծանք տխրամբմունջ ջութակի:

Ու լալիս է ու լալիս է թախծալի
Անցած բոյրը, հեծեծիւնը՝ անհասնում.
Վշտատուջոր լուռ թախծում եմ մեկուսի,
Պահած բոյրդ, հեծեծանքդ իմ սրտում:



Գեղեցիկ փուած
Լուրթ ծովի կրծքին,
Լողում եմ՝ փարած
Զեփիւռի երգին:

Իմ անուշ սիրած,
Իմ անծայր կարօտ,
Թռչում եմ յոգնած
Մեն-միայն քեզ մօտ:

Իսկ նաւս անցնում
Օրօր ու շորօր,
Քեզնից հեռանում
Անդեկ ու մոլոր:

Գլխահակ, տխուր,
Քո սիրով այրած,
Զը գիտեմ թէ ուր
Գնում եմ յոգնած:

* *

Ժպտում, անցնում եմ անծանօթ ափեր.
Ժպտում եմ երկրին, ջրին ու ծաղկին.
Հոգուս ժպտում են անծանօթ դէմքեր
Ու աստեղազարդ լուսեղէն երկին:

Այդ ես եմ ժպտում նրանց մէջ քնքոյշ,
Թէ՛ նրանք ժպտում—այդ չեմ հասկանում.
Բայց կարծես, հոգիս, քո բոյրն է անուշ
Ամեն ինչի մէջ քեզ քնքոյշ գգւում...

* *

Հոգիս տրտում աստղէ թևով մեղմօրէն
Այլ աշխարհի արեւներ է գուրգուրում.
Ու վառում է, գուրգուրում է նրբօրէն
Այլ երազներ, մի այլ պայծառ աշխարհում...

Ես ապրում եմ լոյս երազի աշխարհում,
Այնտեղ հիւսում այլ աստղերի ոսկեցանց
Ու այնտեղից իմ լուռ հոգին ողջունում,
Ողջունում է ու ժպտում է սիրատանջ...

* * *

Սիրում եմ բուրմունքը մազերիդ
ալեծուփ,
Աչերդ լուրթ երկինք—յոյգերիս օրօրան,
Ժպիտըդ գարունի գերթ վարդը բացւող
նուրբ.
Սիրում եմ քո սրտի աստղերը կուսական:

Սիրում եմ երազը գերթ այգը հրաշալի,
Բիւրեղէն աղբիւրի մըմունջը գիւթական.
Իմ հոգին մեղմօրօր հիւսում է լոյսերի
Հէքիաթներ, երազներ, որ և կան և չըկան...

* * *

Քնքոյշ սիրով խաղ էր անում
Նուրբ թիթեռը լոյսի հետ,
Անհոգ սրտով խաղ էր անում
Վառ ճրագի լոյսի հետ:

Ու թևերը ահա այրւած
Ընկել է գեղ լոյսի մօտ.
Լոյսը վառ է, իսկ նա այրւած
Լուռ ընկած է լոյսի մօտ:



Մարել են անհետ ծաղկունքը բոլոր.
Բոյրերն են լալիս իմ հիւանդ հոգում.
Կորցրել եմ սիրած ուղիս հեռաւոր.
Շուրջս անձրեն է տխուր համերգում...

Հանգել են գարնան զարդերը ոսկի.
Աղբիւրն է հեռու մէջում մրմնջում.
Լուռ ունկնդրում եմ մի անյայտ երգի.
— Ո՞ւմ ձեռքն է տանջած ճակատիս
հանդչում...



Կանչեմ ձեզ, հազար, հազար բլբուլներ,
Կանչեմ աշխարհի զեփիւռներ ոլոր,
Իմ քնքոյշ սիրով
Իմ սիրտն է խոցւել...
Եկէք ու առէք իմ սրտի երգեր,
Տարէք ու լցրէք աշխարհը բոլոր...

* * *

Երազ մանկութեան լուսեղէն օրեր,
Յաւէտ չքացաք, էլ չէք դառնալու.
Դուք, իմ վառ գարնան անգիւն ծաղիկներ,
Էլ չէք դառնալու, էլ չէք ծաղկելու:

Տխուր կարօտով ես ձեզ եմ յիշում,
Երբ որպէս թիթեռ անուշ գարնայնի
Ես խնդում էի, անհոգ թռչկոտում
Սիրուն թևերով գոյն-գոյն գեղանի...

Անցել ես հիմա, իմ գեղ մանկութիւն.
Բայց ինչո՞ւ այսպէս ես քեզ եմ յիշում.
Այս մունջ գիշերում ինչո՞ւ ես արթուն,
Տխուր, քնքշալի քեզ եմ երազում...

* * *

Արշալոյսները անյայտի գրկից
Փթթում են, ժպտում ամենայն մի օր.
Փթթում են, ժպտում, մարում սգաւոր...
Արշալոյսները անյայտի գրկից:

Մի անուշ, տխուր մի երգ է հոսում
Տիեզերական անհուն խորքերից.
Տիեզերական անհուն խորքերից
Յաւիտենաբար մի երգ է հոսում...

Լոյսերն են քնքոյշ հեկեկում հիմա.
Մի խոր տխրութիւն իջնում է տրտում,
Հանդարտ ծովանում իմ անյոյս հոգում.—
Լոյսերն են քնքոյշ հեկեկում հիմա...



Այս խաւար, այս տխուր գիշերում
Իմ հոգին անհանգիստ դեգերում,
Դեգերում, որոնում է լոյսեր...
Այս խաւար, այս տխուր գիշերում:

Սև վիշտն է ծաւալել մեղմօրօր
Ցուրտ երկրի երեսին շուրջ բոլոր,
Որպէս նուրբ, արցունքոտ մառախուղ
Սև վիշտն է ծաւալել մեղմօրօր...

Մի անձայն, մահաշունչ սև թռչուն
Կացում է իմ սիրտը մունջ-անքուն
Ու կացում, արիւնում իմ սիրտը
Մի անձայն, մահաշունչ սև թռչուն...

Այս խաւար, այս տխուր գիշերում
Իմ հոգին անհանգիստ դեգերում,
Դեգերում, երազում է լոյսեր...
Այս խաւար, այս տխուր գիշերում...

Դ Ո Ւ Ռ Ը

Իմ հոգին շարունակ և հանգիստ,
անհանգիստ,
Աստղերի, արևի շողերի լոյսի տակ
Դիմում է այն դուռը, որ փակւած է ընդմիշտ,
Ծեծում է անձկալի, ծեծում է շարունակ:

Բայց ինչո՞ւ, չըզիտեմ, իմ հոգին
անհանգիստ
Անձկալի, սիրափառ այն դուռն է միշտ
ծեծում.
Ծեծում է, աղերսում, աղաչում, բայց և
միշտ
Փակւած է. իսկ հոգիս ծեծելուց չի
դադրում...

Անցնում են մեղմիւ օրեր, տարիներ,
վիշտ, ուրախութիւն, ամենն ինչ որ կան.
Մարում եմ պայծառ կապոյտում աստղեր,
Գեղեցկութիւնը ապրում է սակայն:

Գեղեցկութիւնը իշխում է սակայն
Բոլոր մահերին, բոլոր կեանքերին.
Նա անտես ապրում անմեռ յաւիտեան,
Քնքոյշ գոյն տալի ողջ տիեզերքին:

Կեանքում բոլորին մահն է համբուրում.
Անցնում են կեանքում ամենն ինչ որ կան.
Բոլոր բոյրերը անցնում են, մարում,
Գեղեցկութիւնը ապրում է սակայն:

Դու թևերիս մէջ շնչում ես անուժ.
Երազ համբոյրով աչերդ եմ գգւում.
Թւում է այդպէս խանդակաթ, քնքոյշ
Մի ուրիշին եմ ես նուրբ գուրգուրում:

Վշտիդ մտերիւմ ես քոնն եմ հիմա,
Բայց հեծեծում է վշտացած հոգիս.
— Ա՛խ, ո՞ւմ եմ կորցրել յաւիտեան անմահ,
Որ վշտի շղարշ է փռում դէմքիս...

* *

Այս լուռ, թանկագին շքեղ վայրերում
Հոգուս յուշերից այնպէս նագելի
Իմ անուշ սէրն է մեղմօրէն յառնում,
Որպէս սրբազան երգի մեղեդի:

Մի լոյս մեղեդի, քնքոյշ, դողդոջուն,
Որ ձայն է տալի իմ հոգու խորքում.
Անուշ վշտի մէջ սիրտս երազուն
Նուրբ համբոյր տալի ու համբոյր առնում...

Այս լուռ, թանկագին շքեղ վայրերում
Նուրբ երազներ են յածում նագելի,
Իմ անուշ սիրոյ պատկերն է յառնում,
Որպէս մի անդարձ մի լոյս մեղեդի...

Հ Է Ք Ի Ա Թ

Պայծառ, գունեղ՝ զերթ առաւօտ
մայիսեան
Դու բացեցիր դարուն կեանքիս երկնքին.
Բլբուկներս, կաքաւներս քաղցրաձայն
Իմ ջերմ սրտի նուրբ զարթօնքը երգեցին:

Սիրտս՝ գերի անխօս ձայնիդ, երգերիդ,
Բուսցուց ծաղկունք, յորդեց բիւրեղ
աղբիւրներ.

Ու ինձ վրայ քս հովանին՝ վառ ժպիտ՝
Ցրեց պայծառ անմահութեան ջինջ ցօղեր...

Դու. մարեցիր ոբպէս երազ վաղանցիկ,
Դու խառնեցիր օգին, ջրին, աստղերին,
Ու քեզ հետ էլ կարօտ սէրս գեղեցիկ
Անցաւ երկրին, ծաղկին, շողին, երկնքին...

*
*
*

Տխրաշունչ, դժնի այս ցուրտ մռայլում,
Որտեղ քամին է տխուր դեգերում,
— Իմ սիրտը մենակ, սիրտս սգաւոր
Ճրագն է վառում գգւող, լուսաւոր...

Այս դաժան ցրտի մշուշում խոնաւ
Մայր հողն է սառցրել ցուրտը անիրաւ.
— Իմ սիրտը գարնան օրհներգը երգում,
Գարնան ոսկեհեր արեւն է զրկում...

Ու սիրտս յաւերժ օտար այս ցրտին,
Տխրագին անյոյս այս սև գիշերին,
Հրեղէն այգի շողերն է հիւսում
Ու խաւարի մէջ շքեղ երազում...

*
*
*

Դուրսը հողմ ու մէգ. անձրեւ մեղմիւ
Լալիս է քնքոյշ, ախորժ աղմկում.
Անձրեւի տակին, մէգում փաթաթւած
Մեղմ ախորժանքով բարդիս է երգում...

Որքան ախորժ է հնչում իմ սրտում
Անուշ շշունջը լացող անձրեւի.
Որքան սիրելի, մտերիմ, տրտում՝
Միտուն սօսափը բարգու տերեւի...

Քնքոյշ հառաչը հողմի, տերեւի.
Լացող անձրեւի հեկեկանք երգեր...
Թւում է սիրտս է այնպէս վշտալի
Միրաշունչ երգով թափում արցունքներ...



Մի ժայռ, քար վիշտ է կախել իմ
կրծքին.

Հոյսերի երգը շիջաւ մեղմակի.

—Ախ, իշիր, փարիւր իմ անյոյս վշահն,
Բոցերը մարիւր անյոյս տանջանքի...

Հոգիս ծովերում մի մոլոր թռչուն.

—Մի յիշիր հոգուս լոյս հայրենիքից.

Թեաթափ ընկայ այս վայրի ափում.

Շուրջս սև խաւար և հոգու կսկիծ...

Ձեմ ուզում յիշել լոյսերը անցած.

Մի պաղ սառուց է ճակատս այրում.

—Եկ, մոռացութեան թևերդ փռած

Կսկիծ ու տանջանք մարիւր քո զրկում...



Կիթառն է հեծում սուգ վերջալուսին
Հուր արևների անցը մեղմագին...

Անարև թօշնած ծաղիկն է հեծում
Բոյրը աղօթքի խնկում, վերուղղում...

Անցնող քարանի գանգերն են անուշ
Հեռում հեծեծում ու մարում քնքոյշ...

Հուսնեակ գիշերը յաւիտենական
Հէքիաթն է հիւսում միշտ թարմ, դիւթական:



Յուշերի թևերն են սօսափում մեզմ,
 հանգարտ.
 Ունկնդիր քո ձայնին՝ իմ սիրտն է երազում.
 Իմ կեանքի դու անուշ լուսեղէն ակնթարթ,
 Մով ծովը իմ հոգու աչերդ են միշտ
 յուզում...

Աշխարհը, իմ կեանքը դարձրել ես
 առասպել
 Ու սիրտս վանդակել քո անհուն անտառում.
 Երազի միջից լուռ ժպտում են իմ աչեր,
 Քայլում եմ ու շրջում կարծես այլ
 աշխարհում...

Կարծես այլ աշխարհում սիրում եմ ու
 տանջում.
 Սիրում եմ սիրառատ բոլորին, ամենքին.
 Անյայտում իմ սրտի տենչերն են սալառնում
 — Դ՛ու, կորցրած իմ սրտի լոյս անուրջ
 անմեկին...



Դու, որ չըկաս, գուցե և կաս
 Լուրթ անյայտում
 Երգերիս մէջ միշտ, հանապազ
 Դ՛ու ես ժպտում:

Թւում է թէ քեզ մօտ արդէն
 Պէտք է մոռնամ
 Մարդկայինս և երազեմ
 Աստղի նման...

Դու քո երկրից մի բոյր, մի լոյս
 Ի՛նչ ես նետել,
 Իմ գիշերում մեկմ ու քնքոյշ
 Սիրտս գերել...

Դու, որ չըկաս, գուցե և կաս
 Լուրթ անյայտում
 Իմ սրտի մէջ միշտ, հանապազ
 Դ՛ու ես երգում...

* *

Երազներ իմ սրտի, երազներ լուսաւէտ,
Որ սիրուն սաւառնում էք լազուր
բարձունքում,
Կեանքի սև մոռյալում, կեանքի մէջ դուք
յաւէտ
Տեղ չունէք, օտար էք, երազներ սիրասուն:

Քարւաններն ապողերի լուսեղէն, նազելի,
Բոցափայլ, վեհաշուք անցնում են ճամբաներ.
Կեանքի դէմ, մահու դէմ երազիս աստղերի
Քաղցրալոյս բոյլերն եմ անայլայլ ես վառել:

Երազներ իմ սրտի, գեղեցիկ, մաքրաթև,
Կեանքի մէջ դուք չունէք օթեան, հանգրւան.
Զգտում էք դուք դէպի մի անտես, այլ
արև.

Սև կեանքում ձեզ համար տեղ չըկայ
յաւիտեան...

* *

Իմ կեանքը անվիշտ քայլում է, անցնում
գեղեցիկ փուած
Ժապաւէնները ճանապարհների յաւիտեան
անդարձ...

Նա մտերմութեան իր խօսքն է ուղղում
օղին ու ամպին,

Գլուխ խոնարհած ծաղկին ու խոտին՝
մօտիկ գուրգուրում.

Ոսկի աստղերին և յաւերժ շքեղ պայծառ
Արևին

Լուսավառ սրտի անուշ օրհներգն է քնքօրէն
բերում...

Իմ կեանքը անվիշտ, քայլելով թեթև
անցնում է կրկին

Որպէս մի հիւլէ, որպէս մի տերև մեծ
ճանապարհին...



Գարուն է սիրախօս պարտիզում, իմ հոգում
Լուսինը իր լուսով քո շունչն է ինձ բերում.
Վարդերը բուրաշատ, ծաղկունքը արբեցած
Բերում են իմ սէրը, իմ սէրը վաղանցած:

Հէքիաթ էր իմ շուրջը, աշխարհը դու և ես,
Հէքիաթ էր մեր սէրը, մեր սէրը լուսերես.
Պարտիզի վարդերն եմ ջերմ գգւում,
համբուրում,
Ինչպէս քեզ երբեմն գգւել եմ իմ գրկում..

Գարուն է սիրախօս պարտիզում, իմ հոգում.
Թփի տակ մեղմօրէն օձն է լուռ գալարւում.
Այս գիշեր որքան նուրբ է բոյրը վարդերի
Եւ ախորժ, անուշ են վերքերը փրշերի...



Ես սիրում եմ գիշերը խոր, անսահման,
Հոգեմրմունջ լուծիւնն է երբ իջնում,
Երբ երգում են աղբիւրները մեղմաձայն,
Երբ աստղերը հոգուս մէջ են լուռ զարթնում:

Ես սիրում եմ գիշերը խոր, անսահման
Անհունութիւնն սրտիս մէջ է երբ հոսում,
Երբ որ կեանքը անգիտակից, գիւթական
Իր խաւարով, լոյս աստղերով է խօսում...

Ես սիրում եմ խոր գիշերդ անսահման,
Երբ բացւում քո սփինքսային լուծիւն,
Երբ հիւսւում է անուշահոտ, գիւթական,
Հոգեթրթիւ, քաղցրամրմունջ սօսափիւն...

* *

Այս գիշեր,
Ողջ գիշեր
Սոխակը
Մենաւոր
Լալիս էր
Անհատնում
Իմ աւեր
Պարտիզում...

Իմ անվարդ
Ու անզարդ
Պարտիզում
Սըգաւոր
Հեծում էր
Քաղցրախօս
Սոխակը
Մենաւոր...

ՄԻՋԻԳՅԵ

Այս գիշեր,
Ողջ գիշեր
Սոխակը
Բունաւեր
Լալիս էր,
Հեծկլաւում
Սըգաւոր
Իմ հոգում...

ԶԼԳԻՏԵՄ...

Մի հոգեպարար լուրթ մթնշաղում
Հուսէ ծաղկունքներ ու պայծառ վարդեր
Նուրբ բուրում էին, կանչում լուսաբեր,
Յօրինում պայծառ սակեղէն խաղեր...

«Միրա իմ, դու ինչո՞ւ տարւեցիր այդպէս,
Խորունկ կսկիծը բերիր ինձ ու քեզ».

— Զրգիտեմ...

Որպէս խաւարի սե՛ արեգակներ,
Շողուն աչքերը քեզ բախա խոստացան.
Դու լողում էիր բախտաւոր անձայն
Հազուր կապոյտում հպարտ, անարգել...

«Միրա իմ, դու ինչո՞ւ տարւեցիր այդպէս,
Խորունկ կսկիծը բերիր ինձ ու քեզ».

— Զրգիտեմ...

Հսիր, սիրելիս,— և սիրտը հեծեց.—
Հոյսն ու խաւարը իշխում են երկրում.

Իմ արցունքներն ինձ անուշ այրում,
Գեղեցկութիւնն եմ ճշակում այդպէս...

«Բայց ինչո՞ւ վայելք դու գտար այդպէս
Խորունկ տանջանքի, այրող սիրոյ մէջ».

— Զրգիտեմ...

Կ Ո Շ Մ Ա Ր

(1915 թ.)

Քաղցրայոյս, նուրբ ժպիտ որքան վառ
լոյս աստղեր
Թափւեցին երկնքից, թափւեցին այս գիշեր
Լայներախ ծովի մէջ սուզւեցին ու կորան.
Սկանդունդ խորքի մէջ սուզւեցին, էլ
չըկան...

Ժանտահոտ մի բոց շունչ մահաբեր
այս գիշեր
Մի շնչով, մի բոյրով լուռ գրկեց ծաղիկներ.
Ծաղիկներ նրբաթերթ, գունագեղ ու անբիծ
Թօշնեցին ու մեռան բոցեղէն բարկ շնչից...

Սատանան, սատանան վայրենի ու
խելառ,
Դժոխքի զանգի պէս ծիծաղում խանդավառ.
Երգում են, նւագում, ժպտում են կոյր
բուեր.
Սատանան խնջոյք է պատրաստել այս գիշեր:



Փչում է աշնան ցրտաշունչ քամին.
Տխուր գեղութեամբ անտառն է դեղնել.
Փչում է քամին, թափւում են գետնին
Դալկացած, անոյժ մեռած տերեւներ:

Ծաղկունք ու խոտեր տխուր, վշտադէմ
Դէպի մայր հողն են խոնարհած իջնում,
Թաղւում են նոքա, ձուլւում հողի հետ,
Եւ որից կրկին նոր կեանքն է ծնւում...



Լայնարձակ ծովը մեծ ու անուելի
Իր դժոխային երգն է մրմրում:
Աստղերը պայծառ, սիրուն գեղանի
Թովհանքն են հիւսում հեռու կամարում:

Ու նաւակները մոլոր ընթացքով
Տխուր յածում են մութ ծովի կրճքին.
Խենթ ալիքներն անուելի երգով
Ցնցում են նրանց թափով մոլեգին...

Այնտեղ, շատ հեռու, ժայռի գագաթին
Փարոսն է կանգնած մեծ ու անագին.
Նա կանչում է մեղմ իր սիրոյ երգով
Կանչում է իրա նաւերին մոլոր...



Երբ շրջում է իմ սիրելին գեղեցիկ,
Հոգիները խենթ պարում են, սարսրում.
Բարութիւնը այն աչքերում անուշիկ,
Ձերթ կապոյտը ամառնային երկնքում,
Սրտի տխուր կապանքներն է արձակում,
Երբ շրջում է իմ սիրելին գեղեցիկ:

Երբ նայում է իմ սիրելին գեղեցիկ,
Արշալոյսն է փուռում ծովի երեսին,
Զարթնում անուշ զարնանային մեղմ հովիկ,
Ծաղիկները բոյր են խնկում երկնքին,
Հնչում սիրոյ քաղցրակարկաչ մեղեդին,
Երբ նայում է իմ սիրելին գեղեցիկ:

Երբ սիրում է իմ սիրելին գեղեցիկ,
 Նրա ֆաները ծովի արծաթն են յուզում,
 Անուշ-անուշ գրկում իրար լուրթ ալիք,
 Ծաղիկները հեզ նազանքով համբուրում,
 Աշխարհն անուշ եղեմի է փոխարկում,
 Երբ սիրում է իմ սիրելին գեղեցիկ.
 — Դուք չէք տեսել իմ սիրելին գեղեցիկ.
 Ես կորցրել եմ նրա հետքը գեղեցիկ:

20 11 0 11
 * * *

Յաւիտենական անծանօթ մի ձեռք
 Գոյներ է գծում, լոյսեր է վառում,
 Յրում թրթիռներ, անուրջների երգ...
 Նրբին հպումով հոգիս գուրգուրում
 Յաւիտենական անծանօթ մի ձեռք...
 — Պայծառ հիացքով, հոգիս լոյսերում
 Այն բնքոյշ ձեռքն է մեղմիւ համբուրում...

Յաւիտենական անծանօթ մի ձեռք
 Զնշում է լոյսի գունագեղ ներկեր,
 Փռում խաւարի ծովը անեղերք...
 Հոգիս օրօրում ծանր, անտարբեր
 Յաւիտենական անծանօթ մի ձեռք...
 — Օրօրող ձեռքն իմ հլու համբուրում
 Յաւիտենօրէն փուած խաւարում...

Ա Ռ Ա Ի Օ Տ

Ձարթնել է հովը. երգում են հաւքեր.
Սիրտս գգւում է մի անուշ աղմուկ.
Հիւսում են շուրջս նոր օր, նոր երգեր.
Անցնում է երկրից մշուշ ու տաղտուկ:

Տիեզերական լուսէ թագունին
Հիւսում է շքեղ այգը գեղանի,
Անուշ խնդութեամբ լեռնագագաթին
Ես ողջունում եմ այգը ծիրանի:

Ու Բարձունքները վեհ ու լուսափայլ
Կանգնել են լոյսի գունեղ ովկիանում.
Վառ, հոգեպարար Արևն է պայծառ
Վարսերը ցրիւ՝ շքեղ բարձրանում:

Անհուն ու ժպտուն աշխարհն է փռւած.
Ու խենթ աղմուկով իմ սիրտն է խաղում.
Հոգիս գիշերի բանտից ազատւած,
Դէպի Արևն է սիրուն սաւառնում...

U R R O S

Chapter 1. The first part of the book
describes the general principles of
the theory of the subject, and the
principles of the theory of the subject.

The second part of the book
describes the principles of the theory of the
subject, and the principles of the theory of the
subject.

The third part of the book
describes the principles of the theory of the
subject, and the principles of the theory of the
subject.

The fourth part of the book
describes the principles of the theory of the
subject, and the principles of the theory of the
subject.

50 Լ.

Դիմել՝ Թիֆլիս, Գրախանութ „Գիր“,
կամ „Գուտտենբերգ“

33975